


ՀԱՄՈՒՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐՈՎ
ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

ՀԱՄՈՒՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՆՔԱԴԻ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐՈՎ
ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ



ԱՌԱՋԱԲԱՆ

Դեռ առաջին հնգամյակում մեր յերկրի մասը, վողիացած գյուղատնտեսությունն արագ թափով վերածվեց խոշոր սոցիալիստական տնտեսության:

Կոլտնտեսականները, գյուղատնտեսական հիմնական մասամբ դարձան Խորհրդային իշխանության հաստատուն պատվանդանը գյուղում: Դրա հիման վրա ջախջախվեց կապիտալիստական շահագործման վերջին հենարանը՝ կուլակությունը և «ովումք»ի ինդիրը գյուղատնտեսության բնագավառում անվերադարձուն լուծվեց հոգուտ սոցիալիզմի:

Որեցոր առող խորհրդային տնտեսությունները, վորոնց թիվը հասնում է 5000-ի, և բոլորի կացողությունները, վորոնք արդեն ընդգրկում ին գյուղացիական տնտեսությունների 65% -ը, տնտեսաման հնարավորություններ են ստեղծում գյուղատնտեսության մեջնայացման և քիմիացման համար:

Դրա համար Խորհրդային իշխանությունը դեռ առաջին հընդամյակում շատ սուր կերպով գրեց քիմիական արդյունաբերության՝ մասնավորապես պարարտանյութերի արտադրության ինդիրը, բերքատվության բարձրացման հիմնական լծակներից մեկը:

«Հնգամյակի առաջադրություններից և վոչ մեկը—առում և ընկ. Կույրիշեվը—այնքան պարտադիր չե, վորքան քիմիական արդյունաբերության հետ կապված խնդիրները, վորովհետև դայե մեր յերկրի ինքնապաշտպանության հիմքը, դա յե մեր յերկրի դյուղատնտեսությունն արագ թափով զարգացնելու ամենակարևոր հիմունքը»:

Այս նկատառումով առաջին հնգամյակում ուժին թափով կառուցվեցին տասնյակ գիդանա քիմիական կոմբինատներ, ինչպիսիք են՝ սուպերֆիբրատի գործարանները և նինինգրադում, Վասկրեսենսկում, Բերեղնիկի և Մոսկվայի մոտ Բորբիկի գործարանները, Խիբրինի ապատիտների հայտնագործումն ու շահագործումը, համաշխարհային նշանակություն ունեցող կտլի պարարտանյու-

Պատ. իմբագիր՝ Պ. Քալանքարյան
Տեխն. իմբագիր՝ Պ. Սարգսյան

Սըրագրիչ՝ Սոս Հակոբյան
Հանձնվել ե արտադրության 1934 թ. փետրվարի 11-ին
Սուսրագրվել ե տպագրելու 1934 թ. փետրվ. 15-ին
Դրամիտ № 85 Տիրտ 3500 Պատվ № 91

Տօրնվան. ԳՅՈՒՂԱԾԻ ՏՊԱՐԱՆ. ՆԱՐԱԿԵՑԱՆ 50 ՀԵԹ. № 94



11-2673291

Թի հայտաբեղումը և արտադրության կազմակերպումը, իսկ մեղմութ հայտատանում, Ղարաքիլիսայի կիրազոտի գործարանը:

Դյուլատնտեսության քիմիացման և բերքատվության բարձրացման խնդիրներն ել ավելի սուր կերպով դրվում են շրջ հնգամյակում, վորովհետեւ ներկայում գյուղատնտեսական հիմնական հարցերից մեկը հանդիսանում և բերքատվության բարձրացումը: Ընկ. Ստալինը Համկոմկուսի 17-րդ համագումարում այս մասին ասում է. «Գյուղատնտեսության վերակազմակերպումն մոտենում ե իր վախճանին և բերքատվության բարձրացման հարցը դառնում և գյուղատնտեսության վերելքի հիմնական հարցերից մեկը»: Յեկ վորովհետեւ բերքատվության բարձրացման հիմնական լծակներից մեկը պարարտացումն ե, ուստի շրջ հնգամյակում լուրջ ուշադրություն և դարձվում պարարտանյութերի արտադրության և պարարտացման աշխատանքների վրա: Նախատեսված և ամեն տեսակի պարարտանյութերի արտադրությունը բարձրացնել 10 անգամ, վորի ուսցիունալ ուղարկութումն ապահովելու համար անհրաժեշտ ե, վորակազի գյուղատնտեսության բնագավառի բոլոր պարարտանյութերը լուրջ ուշադրություն դարձնեն պարարտացման գործի վրա, տիրապետեն նրա տեխնիկային. ամեն մի կոլտնտեսական, խորհանտեսության մեջ աշխատող յուրաքանչյուր բանվոր, պետք և լավ ծանոթ լինի տեղի պայմանների առանձնահատկություններին և գործածվող պարարտանյութերին:

Այս բրոցյուրի հիմնական նպատակն ե ծանոթացնել կոլտնտեսականներին, խորհանտեսական բանվորներին Հայտատանում տարածված հանգային պարարտանյութերի գործադրման տեխնիկային, վորովհետեւ պարարտացման եֆեկտը մեծ չափով կախված և պարարտացման տեխնիկայից ու նրա ճիշտ կիրառումից: Սակայն պետք է հիշել, վոր չի կարելի պարարտացումն անջատել հողի կանոնավոր մշակումից, չկա ուսցիունալ պարարտացում, առանց հողի ուսցիունալ մշակման: Ուստի պարարտացման զուղընթաց պետք է կատարել հողի կանոնավոր մշակում, կիրառելով ագրոտեխնիկական բոլոր միջոցները, վորոնք և հանդիսանալու յեն 1932 թ. գարնանացանի նոր նվաճումների՝ գյուղատնտեսության վերելքը հուժկութափով առաջ մղելու հիմնական լծակները:

I. ԱԶՈՏԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՇՊԱՆՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Մինչև այժմ Խորհրդային Հայտատանում կատարած փորձերը ցույց են տվել, վոր մեր յերկրի կլիմայական և հողային պայմաններում մեծ հաջողություն են գտնում կիրազոտի և ամոնիումուուլֆատի գործածությունը, վորը պարզ ցույց են տալիս ստորև բերված աղյուսակները:

1931 թ. ստացվել և նետելված սվյալեները

Փորձի աեղը կուլտուրան	Բերք հեկտարից յենակութեան մակարդակ						
	O	N կ	N ա	N ս	N ը	N աս	N ս
Նորագիլթ բամբակ . . .	11.9	13.6	13.8	14.5	—	—	—
Դոյմմեթ բամբակ . . .	13.4	14.5	14.0	14.7	—	—	—
Աղհամղալու > . . .	9.5	10.3	10.4	—	—	—	—
Նորագալիթ > . . .	8.2	8.8	9.0	—	—	—	—
Մարտունի կարտոֆիլ . .	100	134	—	170	—	—	—
Յերեսն տոմատ . . .	173.6	183.3	157.6	179.6	159	—	—
> կաղամք . . .	73.1	92.4	87.7	—	—	—	—
> տոմատ . . .	111.6	153.8	116.8	—	—	—	—
Հարաքիլիուս կաղամք . .	219	410	433	444	—	—	—

1931 թ. Փետեացին փոքրի առջուններից

Հ Ա Դ Բ Բ	Հատիկը գրանիերով			Ծղուը գրանիերով			Ըստհ. բերքը գրանիերով			Ն Կ է և Ն ա-ի հարաբե- րութ.		
	O	N կ	N ա	O	N կ	N ա	O	N կ	N ա	O	N կ	N ա
	0.77	27.55	16.08	1.88	26.90	24.28	2.58	48.45	40.46	100—83.5		
Վերևան	0.33	19.00	14.81	1.88	27.29	27.96	2.28	46.29	42.77	100—92.4		
Հրազդապատ	1.93	22.18	21.20	4.12	27.07	27.44	6.05	49.25	48.64	100—98.7		
Կոտայք	2.37	17.92	19.18	4.34	29.79	25.77	6.71	44.95	—	100—94.2		
Լեռնական	0.55	24.83	22.85	3.57	29.64	32.83	4.12	54.47	55.68	100—102.2		

Նման մի շարք ուրիշ փորձեր ևս հաստատում են, վոր մեր մոտ կիրազուը և ամոնիում-սուլֆատը կամ դերազանցում են ազոտի մյուս բոլոր պարարտանյութերին կամ իրենց ազդեցությամբ նրանցից հետ չեն մոռած, բարձրացնելով բերքը 30—50 տոկոսով:

Այս պատճառով ազոտային պարարտանյութերից կանգ կառնենք գլխավորապես վերոհիշալ յերկու պարարտանույթերի վրա:

Կիրազուն ստացվում և կալցիում-կարբիտի և ազոտի միացումից բարձր ջերմաստիճանի պայմաններում: Այս ձեռք պատրաստած կիրազուը և փոշի յի և ունի հետևյալ կազմությունը՝

Ազոտ (N) — 18—22%

Կիր (CaO) — մոտ 60%

Ածուխ (C) — 15—20%

Ենորհիկ կիրազուի մեջ գտնվող գյուրաշարժ կրի, չեղոքացվում և հողի թթվությունը, վորի շնորհիվ ել կիրազուը թթու հողերում ևս դրական արդյունք է տալիս:

Խոնավ և բաց պայմաններում կիրազուն ողից կլանում և խոնավություն և ածխաթթու, վորոնք միացության մեջ մտներով, առաջացնում են կրաքար և ցիանամիտ, վերջինս ել մնալով, վերածվում և գլցիանդիամիդի, վորը վորոշ պայմաններում, վորոշ բույսերի վրա թունավոր ազդեցություն և գործում: Խոնավ և բաց

պայմաններում կիրազուից ազոտի կորուստ տեղի չի ունենում, ինչպես յենթաղում ելին մինչև վերջին տարիները:

Խոնավ և բաց պայմաններում կիրազուի քաշը մեծանում է իր սկզբնական քաշի 60% օշի չափով, շնորհիվ կլանված ածխաթթվի և խոնավության, վորի հետեւանքով նրա ազոտի ընդհանուր քանակն անփոփոխ մնալով, փոփոխության և յենթարկվում տոկոսային հարաբերությունը, այսինքն՝ ընկնում և նրա ազոտի տոկոսը:

Փորձերը ցույց են տվել վոր 20% ազոտ պարունակող թարմ կիրազուը բաց պայմաններում 2—3 տարի պահելուց հետո, ազոտի տոկոսն իջնում է մինչև 17% օշի, իսկ 7—8 տարուց հետո՝ 12—13% օշի, վորից 9,1% գլցիանդիամիդ, իսկ մնացածը միզանյութ վիճակում, վորպես աղատ կրազու համարյա չի յեղել:

Այս բոլորից պարզ յերեսում ե, թե ինչ չափով կիրազուի արժեքը վորպես պարարտանյութ կախված է նրա պահպանումից:

Ուստի պիտք ե լավ հիշել, վոր կիրազուի պահպանման ամենահիմնական պայմանը պահեստի չոր լինելն ե: Առհասարակ պիտք ե խուսափել կիրազուը պահեստներում յերկար պահելուց, վորովհետև չնչին խոնավությունն անդամ յերկար տարիների ընթացքում բացասական ազդեցություն և գործում:

Կիրազուն ունի մի շարք բացասական հատկություններ, վորոնք վորոշ պայմաններում բացասական ազդեցություն են գործում բույսերի, ինչպես նաև մարդկանց վրա:

ԱՄՈՒՆԻՈՒՄ-ԾՈՒԷՅԱԱՏ

Ամոնիում-սուլֆատն արտաքինից նման և սեղանի աղին, պարունակում և մոտավորապես 20% ազոտ: Ֆիզիոլոգիապես թթու պարարտանյութ ե, այսինքն՝ յերբ բույսի կողմից նրա ամյակն ուղագործվում ե, հողում մնում և աղատ ծծմբական թթուն, վորը միանալով հողի մեջ յեղած կրի հետ առաջացնում և գիպս: Գիպսը թեպիտ ջրում թույլ և լուծվում, բայց տարիների ընթացքում հողից լվացվում ե: Ամոնիում-սուլֆատն աստիճանաբար հողից կլանում, տանում և աղատ կիրը, վորի հետեւանքով հողը դառնում է ավելի թթու, իսկ հողի թթվությունը ցածրացնում է նրա բերքատվությունը:

Այս բոլոր ասածներից կարելի յերկարացնել հետևյալը. կրով աղքատ հողերն ամոնիում-սուլֆատով պարարտանելիս,

մի քտնի տարուց հետո անհրաժեշտ ե պարարտացնել նաև կրովը իսկ վորովնետե Հայաստանի համարյա բոլոր հողերը կրով հարուստ են, ապա առանց կրացման ել ամոնիում-սուլֆատը մեզ մոտ դրական արդյունք ե տալիս:

Ամոնիում-սուլֆատը լավ լուծվում է ջրում, ուստի պահելիս անհրաժեշտ ե նրան պահպանել լրեց և խոնավությունից. պահեստը պետք է լինի չոր և ծածկված, հակառակ դեպքում վերածվում ե մեծ կոշտերի, վորը կդժվարացնի պարարտացման գործը:

Ազոտային պարարտանյութերից հայտնի յեն նաև նորվեգիական և չիլիական սելիտրաները, միզանյութը, արյան ալյուրը և այլն:

II. ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի բոլոր հողերն առաջին հերթին ազոտի, ապա ֆոսֆորի կարիք ունեն, սակայն ամենամեծ բերքի բարձրացում ունենում ենք այդ յերկուսի կամբինացիայից: Այսպես որինակ՝ բամբակի բերքը միայն ազոտից բարձրանում է $17^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$, իսկ ֆոսֆորով պարարտացնելիս՝ $11^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$, մինչդեռ յերկուսը միաժամանակ մատցնելիս (կիրաղու և սուլֆերֆոսֆատ) բամբակի բերքը բարձրանում է $30^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$: Հացահատիկային բույսերի բերքը բարձրացնում է $66^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$, աշնանացան հացահատիկներինը՝ $77^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$, գարնանացան հացահատիկները՝ $85^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$, շաքարի ճակնդեղը՝ $27^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$ և կարտոֆիլը՝ $25^{\circ}/_{\text{v}}\text{-ով}$: Մեր աստծոներին վորպես իւլյուսարացիա բերենք այս սոլյությամբ կատարված փորձերից մի քանիսը:

1920 թ. դաշտային օրգանների փորձերի արդյունքները (բամբակ)

ՇՐՋԱՆԵՐ	ԲԵՐՔԸ ՀԵԿՏԱՐԻՑ ԳԵԿԱՆՆ.				ԲԵՐՔԸ ՀԱՎԵԼՈՒՄԸ $0/0 0/0\text{-ով}$		
	O	N	P	NP	N		NP
Համարլու	10,2	10,5	9,8	12,0	3	4	18
Դուրդուղութ	8,7	10,8	10,0	12,0	24,0	15	38
Զանդիքասար	15,6	20,5	17,7	20,6	32	13	32
Հբազզան	14,1	18,3	16,3	19,4	30	16	37
Վաղարշապատ	7,6	8,8	8,7*	9,9	4	15	31

	ԲԵՐՔԸ ՀԵԿՏԱՐԻՑ ԳԵԿԱՆՆ.				ԲԵՐՔԸ ՀԱՎԵԼՈՒՄԸ $0/0 0/0\text{-ով}$		
	O	N	P	NP	N	P	NP
Հենիսակ. շրջ. կարտոֆիլ	153,8	179,5	162,9	192,3	17	7	27
» շարքարի ճակնդեղ	143,1	166,1	166,5	182,3	15	16	27
Սեփանի. շրջ. աշ. ցորեն	10,4	13,1	13,0	18,5	26	25	77
» գարնան ցորեն	8,6	11,7	11,2	16,5	36	30	91
» գարնան գարի	8,9	12,5	11,2	15,2	30	24	70

Ինչպես ցույց են տալիս բերված փորձերի արդյունքները, մեզ մոտ, ինչպես դաշտային, նույնպես և լեռնային շրջաններում, ավելի լավ հիմքեկտ ստացվում է կիրազոտի և սուլֆերֆոսֆատի կոմբինացիայից: Այս տեսակետից ֆոսֆորային պարարտանյութերից կարենը և կանգ առնել գլխավորապես սուլֆերֆոսֆատի վրա:

ՍՈԼՓԵՐՖՈՍՖԱՏ

Սուլփերֆոսֆատն ստանում են ֆոսֆորիտային ալյուրի վրա ազդեցի ծծմբական թթու: Բացի ջրում և թույլ լիմոնաթթվում լուծվող ֆոսֆորաթթվից, վորոնք կազմում են $12-14^{\circ}/_{\text{v}}$ և միասին կոչվում են յուրացվող ֆոսֆորաթթու, սուլփերֆոսֆատում կան նաև մի շարք բալաստի նյութեր՝ գիպս, յերկաթի, ալումինիումի և մագնեզիումի աղեր: Սուլփերֆոսֆատը թթու պարարտանութե, սակայն հողում թթվությունն չի առաջացնում, ինչպես ամոնիում-սուլֆատը, վորովհետեւ նրա թթվությունը հողում չեղոքանում և ջրի միջոցով:

Սուլփերֆոսֆատը պետք է պահել չոր պահեստներում, առանց պարկերի, վորովհետեւ պարկերը քրեքովլում, փշանում են. չնորհիլ պարարտանյութի թթվության, խոնավությունից նրա մեջ առաջանում են կոշտեր, վորոնց պարարտացնելիս պետք ե մանրացնել:

Բայց լավ ե առհասարակ խուսափել սուլփերֆոսֆատը պահեստներում յերկար պահելուց, վորովհետեւ սուլփերֆոսֆատի մեջ

գտնվող կիրք, յերկաթը և ալիմինիումը ունակցիայի մեջ մտնելով,
սուպերֆոսֆատի ջրում լուծվող մասը վեր են ածում անուծելի
դրության:

III. ԿԱԼԻՊԻՄԻ ՊԱՐԱՏԱՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի հողերը կալիումով հարուստ լինելու պատճառ-
ով առայժմ կալիումի պարարտացման կարիք չեն զգում: Բայց
վորովինեան մենք ամեն տարվա բերքի հետ մեծ քանակությամբ
կալիում ենք վերցնում հողից, առանց այն վերադարձնելու, ինչ-
պես այդ ցույց և տալիս ստորև բերված այսուսակը.

Ցաւաքանչյուր տարի միջին բերք վորտան սննդանից և
սանում ենդից

1 էլեկտրոնի միջին մասը	Մննդանյութերի օր-ը միջին բերքից					Մննդանյութ. կիլոգրամ				
	N	P	K ₂ O	CaO		N	P	K ₂ O	CaO	
Հացահատիկ . .	20	1,5	0,8	0,6	0,1	49	22	42	13	
» ծղոտը	40	0,55	0,2	1,0	0,33					
Կարտոֆիլ . .	180	0,37	0,14	0,6	0,03	80	32	148	50	
» ցողունը	50	0,4	0,15	0,8	0,9					
Շաքարի ճակնդեղ	300	0,2	0,09	0,25	0,06	120	50	175	58	
» ցողունը	200	0,3	0,1	0,5	0,2					
Առվույտ . .	80	2,6	0,7	1,5	2,6	208	56	120	208	

Կարող ե հետագա տարիների ընթացքում մեր հողերն ևս
կալիումի պարարտացման կարիք են զգում, սակայն ներկայումս կա-
լիումի պարարտացման կարիք են զգում միայն այն հողերը, վոր-
տեղ մշակում են ծխախոտ, կարտոֆիլ, ճակնդեղ և այլն, վորոնք
մյուս բույսերի համեմատությամբ ավելի շատ հողից վերցնում են
կալիում, վորը պարզ ցույց տվեց վերեկում բերված այսուսակը:
Այս պատճառով մեզ այս տեսակեաից հետաքրքիր ե նաև կալիու-
մի պարարտանյութերը: Կալիումի բնական հանքերից հայտնի յեն՝

Ս ի լ վ ի ն ի ջ

Սիլինիտի կազմության մեջ մտնում են կալիում և նատ-
րիում քլորիտների աղերը, վորոնք պարունակում են 15% կա-
լիում:

Կ Ա Խ ն ի ջ

Կախնիտը կալիում-քլորիտի, մագնեզիում-սուլֆատի և նատ-
րիում-քլորիտի խառնուրդն ե, պարունակում և մոտավորապես 12% կա-
լիում:

Կ Ա Ռ ն Ա լ ի ջ

Կառնալիտը կալիում և մագնեզիում քլորիտների կրկնակի
աղն ե, պարունակում և մոտավորապես 13% կալիում:

Մրանք բարորն ել շատ նման են սովորական աղին, վորով-
հետեւ նրանց մեջ կալիումի 0% ցածր ե, դրա համար ել մած քա-
նակությամբ պարարտանյութի կարիք և զգացվում, վորը դժվա-
րացնում է նրանց փոխադրման գործը, մյուս կողմից, այս աղե-
րով պարարտացնելիս մենք մեծ քանակությամբ բարաստի նյու-
թեր (նատրիում, քլոր և այլն) ենք մտցնում հողը: Այս իսկ պատ-
ճառով լուսաբար այդ կալիումով աղքատ բնական պարարտա-
նյութերը վերամշակում են և ստանում 30—40% ային կալիումի աղ:

30—40 ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿԱԼԻՊԻՄԻ ԱՊ

Մտացվում ե սիլինիտից և կառնալիտից, պարունակում և
30—40% կալիում, վորպիս պարարտանյութ, գործածվութ և մը-
շակուղ բոլոր բույսերի համար:

Մ Ա Խ ի թ ի թ

Մոխիրն ստացվում ե փայտի, ծղոտի, տորֆի և բուսական
այլ մնացորդների այրելուց, վորպիս պարարտանյութ կարող է
փոխարինել թանգագին կալիումի աղերին: Բացի կալիումից, պա-
րունակում ե նաև հեղա լուծվող փոսֆորաթթու և բավականին
քանակությամբ կիր: Տարբեր ծագում, ունեցող մոխիրների կազ-
մությունը տարբեր ե, ինչպես այդ ցույց և տալիս ստորև բեր-
ված այսուսակը.

Մ Ա Խ Ի Բ	K ₂ O %	P ₂ O ₅ %	CaO %
Գոմաղը	12	5	8,5
Յորենի դարման . .	28,91	5,15	6,89
Կաղնի փայտի մոխիր	13,05	1,14	77,92
Վարսակի ծղուտ . . .	16,06-21,0	2,86—7,02	4,89—8,61

Ինչպես տեսնում ենք մոխիրը լավ և նաև նրանով, վոր նրա մեջ բույսի համար վասակար վոչ մի նյութ չկա, հեշտությամբ մարսվում ե բույսի կողմից և մօխրով կարելի յի պարարտացնել համարյա բոլոր հողերը:

Մոխիրի յուրաքանչյուր ցենտները կարտոֆիլի բերքը մեկ հեկտարից բարձրացնում ե 2,5—6 ցենտ., իսկ առվույտի բերքը՝ 1,25 ցենտ.:

Այս բոլորից հետո պարզ ե, թե մոխիրը վորքան արժեքավոր պարարտանյութ ե, ուստի անհրաժեշտ ե մոխիրի ամենափոքր քանակությունն անգամ ոգտագործել վորպես պարարտանյութ:

Մոխիրը դաշտերում կույտերով պահել չի կարելի, վորով հետև առաջին իսկ անձրել լվանում, տանում և նրա սննդանյութերը: Անձրեներից, քամուց և կենդանիներից պաշտպանելու համար ստացվող մոխիրը պետք է պահել ծածկոցների տակ կամ աղուսով և կավով պատած փոսերում:

ԻՆՉՐԵՍ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐՈՎ

Պարարտանյութերը սփռելու ամենալավ միջոցը հատուկ շարքացանների կամ մեքենայական շաղացանների գործածությունն ե, վորոնք ունեն մի շարք առավելություններ ձեռքով սփռելու համեմատությամբ: Մեքենայական պարարտացումն ավելի քիչ աշխատող ձեռք և պահանջում, արագացնում և աշխատանքը. այսպիս որինակ՝ մի մարդը մի զույգ ձիով մի որում պարարտացնում ե 10 հեկտար, մինչդեռ մի մարդը ձեռքով կարող ե պարարտացնել ամենաշատը՝ 1—2 հեկտար: Վերջապես պարարտանյութ սփռող մեքենաները պարարտացումն ավելի հավասարաշափ են տարածում: Այս վերջին մոմենտը մեծ նշանակություն ունի պարարտացման տեխնիկայի մեջ: Յեթե մի բույսի տակ ընկնի մի բուռ պարարտանյութ, ինչպես այդ հաճախ պատահում ե ձեռքով պարարտացրած դաշտում, ապա բույսը կարող ե այրվել, և ընդհակառակը բույսերից գոմանք եւ քիչ կամ բոլորովին պարարտացում չեն ստանում, վորի համար և ավելի նվազ են աճում, այսպիսով ստացվում ե գաշտի խայտարգետ պատճեր:

Ուստի ձեռքով շաղ տալիս ևս մեծ ուշադրություն պետք ե գարձնել պարարտանյութը հավասարապես սփռելու վրա:

Թեպետ մեզ մոտ դեռևս պարարտացումը մեքենայացված չե, վորը խոշոր բաց և գյուղատնտեսության մեքենայացման գործում, սակայն մեր Մեքենա-Տրակառային Կայաններն այսուհետեւ ուշագրություն պետք ե հատկացնեն պարարտացման մեքենայացման վրա, վորովհետեւ ձեռքի պարարտացումը բացի անվորակ լինելուց, ի վիճակի չե սպասարկելու որեցոր ընդարձակվող սոցիալիստական գյուղատնտեսության ցանքերի տարածությանը, վորը հաշվում ե հարյուր հազարավոր հեկտարներով: Սակայն այնչափով, վորչափով մեզ մոտ դեռ ամենատարածված ձեզը ձեռքի պարարտացումն ե, մի քանի խոսքով կանգ առնենք պարարտացման տեխնիկայի վրա:

I. ԻՆՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ԱԶՈՏԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐՈՎ

ԿԻՐԱԶՈՑ

Եւրբ կառարել պարարտացումը

Անցյալում կար կարծիք այն մասին, վոր կիրազոտով հողը պետք ե պարարտացնել ցանքսից 1—2 շաբաթ առաջ, վորպեսդի այդ ժամանակամիջոցում նա քայքայվի, դառնա բույսին մատչելի և ապա, իբր թե նրա քայքայման պրոցեսում առաջացող միջանկյալ նյութերը չվնասին բույսերին: Նման յենթադրությունները հիմնովին սխալ են: Այս ուղղությամբ կատարված բաղմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր կիրազոտի շուտ կամ ուշ հողը մտցնելու խնդիրը պայմանավորված է հողի տեսակից և մշակվող կուլտուրայից:

Այն հողերը, վորոնց մեջ կիրազոտի քայքայումը դանդաղ և ընթանում, ինչպիսիք են թթու և ավագային հողերը, կիրազոտը պետք է հողը մտցնել ցանքսից 2—3 շաբաթ առաջ, իսկ կալային չեղոք հողերում, վորտեղ կիրազոտն արագ և քայքայվում, կիրազոտով կարելի յե պարարտացնել նույնիսկ ցանքսի որը, այն պայմանով, վոր հողը չոր չինի, վորովհետեւ խոնավության բացակայության դեպքում կիրազոտի քայքայումը դանդաղ և ընթանում:

Կիրազոտը հողը մտցնելու ժամանակը վորոշելիս, ինչպես ասացինք, պետք է հաշվի առնել նաև մշակվող կուլտուրայի առանձնահատկությունը: Այն բույսերը, վորոնք իրենց դարձացման նախնական շրջանումն են, մեծ քանակությամբ պատրաստի ազոտական թթվի աղերի կարեք են զգում, ինչպես որինակ՝ ճակընդեղը և մասամբ ել բամբակը, ապա այդպիսի կուլտուրաներին հատկացված վարելահողերը կիրազոտով պետք ե պարարտացնել ցանքսից շատ առաջ, անգամ աշնանից, վարից առաջ և ապա վարել գութանով:

Խճախ կառարել պարարտացումը

Կիրազոտը ձեռքով շաղ տալիս շատ փոշի յե բարձրանում, վորի առաջն առնելու համար մեր պայմաններում կիրազոտը խառնում են մեկին—մեկ կամ մեկին—յիրկու հարաբերությամբ խոռնավ հողի հետ և նոր շաղ տալիս, ապա հողը լավ փոցիում: Այս

ձեռք շաղ տալիս կիրազոտը վոչ միայն չի փոշիանում, այլև մեծ չափով նպաստում ե նրա հավասարաշափ ցրելուն: Փոշիացման դեմ կիրազոտը խառնում են նաև փայտի թեփի հետ կամ սրսկում են ջրով (100 կիլոգ. կիրազոտին ցնցուղով շաղ են տալիս 12 լիտր ջուր):

Կիրազոտը պետք է հողի հետ խառնել շաղ տալու մոմենտին, խառնել և թողնել չի կարելի, վորոշենելու հողի միջավայրում կիրազոտը քայքայվում ե և տեղի յե ունենում ազոտի կորուստ:

Պարարտացման ժամանակ, ինչպես ասացինք վերելու, կիրազոտը վորոշ պայմաններում ազում ե նաև մարդկանց վրա: Աւատի անհրաժեշտ ե կիրազոտը գործածելիս զգուշանաբ իմանալով հետեւյալը:

Կիրազոտը շփկելով լորձաթաղանթների հետ բորբոքում և առաջացնում (կոկորդ, քիթ, աչքեր), ուստի լավ կիրինի, յեթե կիրազոտի հետ գործ ունենալիս ակնոցներ գնել և ծածկել քթանցքերը բամբակով: Մարմինի բաց մասերում վերքեր ունեցող մարդիկ չպետք ե կիրազոտի հետ դործ ունենան, վորովհետեւ նա թունավոր ազդեցություն ե գործում, ինը ընկնում և արյան մեջ:

Կիրազոտն ավելի թունավոր ազդեցություն ե գործում, յերես կիրազոտի հետ գործ ունեցող մարդիկ, այդ ախտատանքն սկսելուց առաջ կամ հետո, վոգելից խմիչք են դործածում, ուստի անհրաժեշտ ե կիրազոտի հետ գործ ունենալիս, վոչ մի կաթիլ վոգելից խմիչք չգործածել:

Կիրազոտը պարարտացման նորմաները

Արդյունավետ բերքի բարձրացում ստանալու գործում նշանակություն ունի նաև պարարտանյութերի քանակը, վորոշենելու մեծ դեպքում պարարտանյութի նորմայի բարձրացումը բերքի բարձրացում չի տա, ընդհակառակ՝ պարարտանյութը վորոշ նորմայից ավելացնելուց համարյա թե բերքի նոր բարձրացում չենք ստանում: Բերքի անհրաժեշտ բարձրացում ստանալու համար կան հատուկ ուղտիմալ նորմաներ, վորի համար անհրաժեշտ ե ամեն մի կոնկրետ պարագայում փորձերի միջոցով վորոշել տվյալ պարարտանյութի, տվյալ հողի և բույսի համար համապատասխան ուղտիմալ նորմաները:

Փորձերը ցույց են տվել, վոր նայած հողի և մշակույթի պահանջին մեկ հեկտար հողին կարելի յե տալ 45—90 կիլոգրամ ազում:

Անդրկովկասում բամբակի համար, վորպես միջին նորմա, ընդունված է 60—90 կիլոգրամ ազոտ կամ 300—450 կիլոգրամ կիրաղոտ: Հայաստանում բամբակի համար մեկ հեկտարին տալիս են 50—60 կիլոգրամ ազոտ, կարելի յե տալ նաև 90 կիլոգրամ, յեթե հողը պարարտացնենք նաև ֆոսֆորով:

ԱՄՈՒՆԻՈՒՄ ՍՈՒԼՅԱՏ

Ենք կատարել պարարտացումը

Ամսնիում սուլֆատը սալպետերներից տարբերվում է նրանով, վոր սալպետերները բռույսների կողմից ավելի արագ և հեշտ են յուրացվում, իսկ ամսնիում սուլֆատը համեմատաբար ավելի զանգազ, դրա համար ել վերջինս ավելի յերկար ժամանակ է ներգործում: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, վոր ամսնիում-սուլֆատի աստիճանական քայլայումից առաջացած տայտկը կլանվում է հողի կլանող կոմպլեքսի կողմից և ապա տատիճանաբար դռըս մղվում նրանից, վերածվում ազոտական թթվի աղերի և աստիճանաբար յուրացվում բռույսների կողմից: Թեպետ ամսնիում սուլֆատը լավ լուծվում է ջրում, սակայն հողից նա չի լվացվում շնորհիվ նրա կլանվելու հատկության: Նըկատի ունենալով ամսնիում սուլֆատի նմանողինակ հատկությունները, գարնանացանները կարելի յե պարարտացնել ցանքից դուրս 1—2 շաբաթ առաջ, իսկ ծանր-կավային հողերում աշնանացանը՝ անգամ աշնանից, յեթե մշակվող բույսն իր զարգացման սկզբում և աղոտական թթվի աղերի պահանջ զգում:

Թեթե հողերում, վորտեղ աերացիայի պայմաններն ավելի լավ են, ամսնիում-սուլֆատն իր ներգործության արագության տեսակետից սալպետերներից հետ չի մնում, իսկ կավային հողերում հետ և մնում և ներգործում է մի քանի տարի:

Սովորաբար ինչպես մյուս պարարտանյութերը, նույնպես և ամսնիում սուլֆատը ևս մեկ մոտ ձեռքով են շաղ տալիս: Ձեռքով շաղ տալիս պարարտանյութը լցնում են գոգնոցը և դաշտի մեջ քայլելով շաղ տալիս՝ նման շաղացանի. պետք է աշխատել բաց տեղ չթողնել, կամ չպետք է մի տեղ ել չափից շատ պարարտանյութ տալ: Շաղ տալուց հետո հողի հետ լավ խառնելու համար պետք է լավ փոցին, ավելի լավ կիրնի կատարել թեթե հերկ:

Ամսնիում սուլֆատը թեպետ թունավոր չե, բայց առհասարակ հանքային պարարտանյութեր գործածելիս պետք է դուշ լինել: Զպետք ե կեղտոտ ձեռներով ուտել, աշխատանքը վերջաց-

նելուց հետո պետք է թափ տալ փոշոտած հագուստը և լվացվել սապոնով:

Ամսնիում սուլֆատը պարունակում է մոտ 20% ազոտ. մեկ հեկտարին կարելի յե տալ 60—90 կիլոգրամ ազոտ կամ 300—450 կիլոգրամ ամսնիում սուլֆատ:

Ազոտային հանքային պարարտանյութերից են նաև ամսնիում քլորիտը, միղանյութը և սալպետերները: Սալպետերներն աչքի յեն ընկնում բռույսի կողմից դյուրությամբ յուրացցիկերու հատկությամբ, ուստի գարնանացան կուլտուրաների տակ սալպետերները մտցնում են ցանքից ամիջապես հետո փոցին տակ կամ նրանով կատարում են մակերեսային պարարտացում:

Իսկ աշնանացան կուլտուրաները պարարտացներիս մտցվելիք գողայի մի մասը մտցնում են աշնանից, ցանքսից անմիջապես հետո և փոցինում, իսկ մյուս մասը մտցնում գարնանը շաղ տալով ծած արտօւմ. սակայն պետք ե ընտրել չոր յեղանակ, հակառակ դեպքում բռույսի տերենները կայրվեն: Սալպետերի պարարտանյութերով ճականացնելով, բամբակի և այլ շարքահերի կուլտուրաները կարելի յե պարարտացնել շարքերով:

Սալպետերային պարարտանյութերից մեկ հեկտարին կարելի յե տալ մինչև 300 կիլոգրամ, իսկ մեզ մոտ Միության մասշտաբով սալպետերների ամենաբարձր նորման 200 կիլոգրամ է:

Պետք է լավ հիշել, վոր աղոտային պարարտանյութերից կիրաղթում չի կարելի խառնել նորվեգիական սալպետերի, սուլֆերփոսֆատի, ամսնիում սուլֆատի և ամսնիում քլորիտի հետ, վորովինետև պարարտանյութերը խառնելիս՝ նրանց մեջ կարող են առաջանալ քիմիական պրոցեսներ և բացասաբար անդրադառնալ պարարտանյութերի վրա: Իսկ ամսնիում սուլֆատը չի կարելի խառնել նորվեգիական սալպետերի, թումաս շակի, վոսկրային և ֆոսֆորային ալյուրների հետ, ինչպես նաև կիրաղոտի հետ:

II. ԻՆՉՈՐԵՍ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՅՑՈՒԹԵՐՈՎ

Սեր կատարել պարարտացումը

Սուլֆերփոսֆատի ֆոսֆորային թթուն լավ լուծվում է ջրում և հեշտությամբ լուրջացվում բռույսների կողմից: Սակայն լուծվող ֆոսֆորաթթվի մի մասը հողում աստիճանաբար միանում

ե կրի, յերկաթի և ալումինիումի հետ և դառնում բույսերին անմատչելի, վորպեսզի վերոհիշյալ պրոցեսն ավելի քիչ տեղի ունենա, սուպերֆուֆատը ցանքսից շատ շուտ չպետք է մացնել, ալ պետք է նրանով պարարտացնել հողը ցանքսից մի քանի որ առաջ կամ ցանքսի որը:

Խճափես կատարել պարարտացումը

Սուպերֆուֆատն ևս մեզ մոտ շաղ են տալիս ձեռքով, ճիշտ նույն ձեռվ, ինչպես ամոնիում սուլֆատը. հավասար շաղ տալու համար կարելի յե խառնել հողի հետ և ապա պարարտացնել:

Սուպերֆուֆատն այս պարարտանյութերից ե, վոր կարելի յե շարքացան մեքենաներով տալ հողին: Այս ձենվը կիրառում են հատկապես շաքարի ճակնդեղի և մի քանի հտարիկավոր կուլտուրաների պարարտացման համար: Այս նպատակով կառուցված են այսպիս կոչվող «կոմբինացված» պարարտանյութ սփոռող մեքենաներ: Այս տիպի մեքենաներն ունեն յերկու արկղ (սերմի և պարարտանյութի) և յերկու շարք սաշնիկներ: Առաջին մասի սաշնիկները, վորոնք հողի մեջ տվելի խորն են գնում, թափում են պարարտանյութերը, իսկ հետեւինները՝ սերմները, նույն շարքերով, սակայն ավելի փոքր խորության:

Սուպերֆուֆատի այս ձեվի պարարտացումը կատարում ե պարարտանյութի դդալի խնայողություն: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, վոր շարքային պարարտացման ժամանակ, սուպերֆուֆատն ավելի քիչ մակերեսով և շփում հողի և նրա մեջ գտնվող կրի, յերկաթի և ալումինիումի հետ, վորի շնորհիվ սուպերֆուֆատի անլուծելի դրության վերածման պրոցեսն ավելի դանդաղ և տարվում, իսկ այդ ժամանակամիջոցում բույսը կարողանում է ավելի մեծ քանակությամբ մատչելի սուպերֆուֆատ ընդունել:

Սուպերֆուֆատ պարարտացնելու նորմաներ

Սուպերֆուֆատը պարունակում է $12-14^{\circ}/_0$ բույսին մատչելի քոսֆորաթթու նորմա: Գողայի գեպքում մեկ հեկտարին տալիս են 45 կիլոգրամ քոսֆորաթթու, վորը համապատասխանում է 320 կիլոգրամ $14^{\circ}/_0$ -ային սուպերֆուֆատի: Ավելի մեծ դոզա կարելի յե ընդունել աղքատ և սուպերֆուֆատով յերկար ժամանակ չպարարտացված հողերի համար, և ընդհակառակը, կարելի յե չպարարտացված հողերի համար, կամ կարելի լավ պոքր դոզա տալ, յեթե նախորդող բույսի տակ հողը լավ և պո-

րաբացված: Այսպիս որինակ՝ չպարարտացված հողերում կարտոֆիլի և վուշի համար կարելի յե հեկտարին տալ 320 կիլոգրամ սուպերֆուֆատ, իսկ յեթե միաժամանակ տալիս ենք ազոտային և կալիումի պարարտանյութ, ապա սուպերֆուֆատի գողան կարելի յե բարձրացնել մինչև 400 կիլոգրամ: Ցանքսաշրջանառության մեջ լավ պարարտացրած նախորդող հետո կարելի յե բարձրվել 200—250 կիլոգրամ սուպերֆուֆատով:

Սուպերֆուֆատը չի կարելի խառնել կիրազուի, չիլիական սալամետերի, ինչպես նաև թումաս շակի, վոսկրային և ֆոսֆորիտային ալյուրների հետ: Վորովհետեւ, որինակ՝ սուպերֆուֆատը կիրազուի հետ խառնելիս վերջինի մեջ յեղած կիրը ցածրացնում է սուպերֆուֆատի պարարտացման արժեքը:

Մյուս ֆոսֆորային պարարտանյութերից թումաս շակը, վոսկրային ալյուրը և ֆոսֆորիտները, սուպերֆուֆատի համամատությամբ ավելի գժիգարալուծ են, ուստի սրանք հողն են մացնում ցանքսից վորոշ ժամանակ առաջ: Նրանց քայլքայության արագացնելու համար պետք է ավելի լավ խառնել հողի հետ:

III. ԿԱԼԵՈՒՄԻ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

30—40% ԱՅԻՆ ԿԱԼԵՈՒՄԻ ՄԻ ԱԴ

Ենր կատարել պարարտացումը

Հատիկավոր կուլտուրաները կալիումի ազով պարարտացնելիս կարելի յե հողը մացնել ցանքսից յերկու շաբաթ առաջ, իսկ շաքարի ճակնդեղի և կարտոֆիլի պարարտացման ժամանակ՝ վոչ ուշ քան ցանքսից յերեք շաբաթ առաջ:

Հիշյալ ժամանակից ուշ մացնելու զեպքում բացասական ազդեցություն և գործում նրանց մթերքների վորակի վրա, ճակնդեղում պակասում և շաքարի 0% -ը, իսկ կարտոֆիլում ընկնում և ուլայի տոկոսը:

Մարգագետինները և ցանովի վերաբույերը պարարտացնում են աշնանից փոցի ժամանակը: Հեկտարին կարելի յե տալ 100—200 կիլոգրամ $30\%-ային$ աղ:

ՄՈԽԻԲ

Կարտոֆիլը, ճակնդեղը, գարին ու արևածաղիկը սոխով պետք և պարարտացնել ցանքսից վորոշ ժամանակ առաջ, իսկ

ընդհանրապես գարնանացան կուլտուրաները պետք ե պարագա-
տացնել վաղ գարնանից:

Մոխիբը պետք ե շաղ տալ վաղ առավոտյան, վորպեսզի քիչ
փոշիանա, կարելի յե խառնել խոնավ հողի հետ:

Հողի հետ խառնում, հավասարեցնում են գութանով կոմ-
փոցիով: Մոխրով պարարտացում կատարելուց հետո, հողը կա-
րող ե կեղեվակալել վորը պետք ե վոչնչացնել փխրացման մի-
ջոցով: Դաշտային հողամասերին մոխր կարելի յե տալ հեկտա-
րին 500 կիլոգրամ, իսկ մարդադեսիններին՝ 480—1200 կիլոգրամ:



ԳԻՒԸ 30 Կ.

թ

26732



ՇԱՄՍՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Техника удобрения минеральными веществами

Сельхозгиз

1934

Эривань